նութեան և նամակ պահպանութեան։ Շնորհք առաքելական և ա[ստուա]ծային բազմազեղուն և բազմապատիկ նախախնամական ա[ւր]հնութի[ւ]ն ի վերայ Գանդիմանու և ձգախոռու եկեղեցեաց, քահանայից, զոլվաթաւորաց և առ հասարակ ժողովրդականաց, մեծամեծաց և փոքունց, արանց և մանկանց...։ Ի վերայ ձեր Դէտ զսիրելի որդին մեր զիսահակ Վարդապետն փոխանակ մեր... զի հնազանդ դորին՝ մեզ է հնազանդ. և հակառակքն՝ նոյնպէս... Գրեցաւ թուղթս ի թուին Հայոց ՌՃԺԲ. (=1663) Ապրիլի ամսոյ Լ. (=30)» (6)։

Գուցէ, ինչպէս կը կարծէ նաև Պր. Յ. Քիւրտեան, «այս Իսահակ Վարդապետը Արտազու Ս. Թադէոսի Վանքին Իսահակ Վարդապետն է», (7) զոր հաղորդակցութեան մէջ կը գտնենք Հռոմի Հաւատոյ Տարածման Սրբազան ժողովին հետ, որուն կղերանոցին մէջ կը պահէր, իր «հոգեծին զաւակը՝ Փիլիպպոս դպիրը» (8)։

Յակոբ Ջուղայեցի իր հոգածութեան առարկայ կ՚ընէ մանաւանդ Սանահինի Վանքը, որուն Վանահայր կը կարգէ Սարգիս Եպիսկոպոս Արզութեանը (1661)։ Կա-

---

(6) Յ. Քիւրտեան, Անդ, «Հասկ» ԻԱ. Տարի, 1952, Mars-Ապրիլ, թիւ 3–4, էջ 87։

(7) Անդ։

(8) Archivio S. C. P. F. Congressi Armeni, vol. 5, fol. 695;